«Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի կանոնակարգը

Մրցույթն անցկացվում է չորս տարիքային խմբերով՝

1) 1-ին տարիքային խումբ՝ 6-ից 8 տարեկան երեխա ունեցող ընտանիքներ (2013-2015 թթ).

2) 2-րդ տարիքային խումբ՝ 9-ից 11 տարեկան երեխա ունեցող ընտանիքներ (2010-2012 թթ).

3) 3-րդ տարիքային խումբ՝ 12-ից 14 տարեկան երեխա ունեցող ընտանիքներ (2007-2009 թթ).

4) 4-րդ տարիքային խումբ՝ 15-ից 16 տարեկան երեխա ունեցող ընտանիքներ (2006-2005 թթ):

9.Հաշմանդամություն ունեցող անձանց *(հայրը կամ մայրը սայլակով)* ընտանիքները եզրափակիչ փուլի մրցույթին մասնակցում են 2 տարիքային խմբով: Հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքներում երեխայի տարիքային խումբն է՝ 6-9 (2015-2012 թթ.) և 10-13 (2011-2008 թթ.) տարեկան:

10. Մասնակցության պայմաններն են՝

1) Մրցույթի 1-ին մարզային փուլին կարող են մասնակցել բոլոր ընտանիքները, որոնք ունեն բժշկի թույլտվություն: Ընտանիքի կազմը՝ 3 անձ *(հայրը, մայրը և երեխան՝ անկախ սեռից)*,

2) ընտանիքը մրցույթին մասնակցում է միասնական համազգեստով,

3) յուրաքանչյուր ընտանիք իրավունք ունի մասնակցելու միայն մեկ տարիքային խմբի մրցույթին:

11. Մրցույթի 2-րդ՝ հանրապետական եզրափակիչ փուլին մասնակցում են Հայաստանի Հանրապետության մարզերում, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետությունում 1-ին փուլում ըստ տարիքային խմբերի մրցանակային 1-ին տեղը գրաված ընտանիքները: Հաշմանդամություն ունեցող անձանց մրցույթում Հայաստանի Հանրապետության մարզերից մասնակցում են մեկական ընտանիք և Արցախի Հանրապետությունից 2-ական, իսկ Երևան քաղաքից՝ 12 ընտանիքներ *(հայրը կամ մայրը սայլակով)*:

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՐԶԱՁԵՎԵՐԸ (ՉՈՐՍ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ)

Մրցույթի մրցաձևերն են՝

1) խաղային փոխանցավազք 30 մ,
2) վարժություն բասկետբոլի գնդակով,
3) թենիսի գնդակի նետում,
4) խաղային փոխանցավազք՝ թենիսի գնդակով,
5) հեռացատկ (տեղից),
6) խաղային փոխանցավազք 80 մ (30 մ + 30 մ + 20 մ):

13. Մրցույթի ընթացքում յուրաքանչյուր խախտման համար ընտանիքին տրվում ուաանային միավոր (ըստ մրցաձևերի):

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

Մրցույթի 1-ին մարզային փուլում ընդհանուր թիմային հաշվարկում յուրաքանչյուր տարիքային խմբում մրցանակային տեղեր գրաված ընտանիքները պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով և դրամական մրցանակներով.

1) 1-ին տեղ՝ 100.0 հազար *(մեկ հարյուր հազար)* դրամ,
2) 2-րդ տեղ՝ 90.0 հազար *(ինսուն հազար)* դրամ,
3) 3-րդ տեղ՝ 70.0 հազար *(յոթանասուն հազար)* դրամ:

23. Մրցույթի 2-րդ՝ հանրապետական եզրափակիչ փուլում չորս տարիքային խմբերում և հաշմանդամություն ունեցող անձ ունեցող երկու տարիքային խմբերում ընդհանուր թիմային հաշվարկում մրցանակային 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված ընտանիքները պարգևատրվում են՝ համապատասխանաբար 350.0 հազար *(երեք հարյուր հիսուն հազար)*, 300.0 հազար *(երեք հարյուր հազար)* և 250.0 հազար *(երկու հարյուր հիսուն հազար)* դրամ դրամական մրցանակներով, մեդալներով, հուշանվերներով, և նրանց տրվում են վկայագրեր:

24. Մրցույթի 2-րդ՝ հանրապետական եզրափակիչ փուլում յուրաքանչյուր տարիքային խմբում առանձին մարզաձևերից առաջին տեղերը գրաված ընտանիքները, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձ ունեցող ընտանիքները Նախարարության կողմից պարգևատրվում են 45.0 հազար (քառասուն հինգ հազար), 2-րդ տեղերը 35.0 հազար (երեսուն հինգ հազար) և 3-րդ տեղերը՝ 25.0 հազար (քսան հինգ հազար) դրամ մրցանակներով:

25. Պարգևատրվում են նաև հանրապետական եզրափակիչ փուլում ընտանիքների ամենակրտսեր մասնակիցը և հաշմանդամություն ունեցող անձ ունեցող ընտանիքների ամենակրտսեր մասնակիցը՝ 45.0 հազարական (քառասուն հինգ հազար) դրամով:

26. Հանրապետական եզրափակիչ փուլի մրցույթում ընդհանուր հաշվարկով առաջին, երկրորդ, երրորդ տեղերը գրաված պատվիրակությունները պարգևատրվում են համապատասխան գավաթներով: